

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 5 - Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով և քննարկելով Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում, ինչպես նաև Գիտական խորհրդում հաստատված բոլոր կարգերում, կանոնակարգերում և այլ իրավական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու հարցը՝

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Համալսարանի Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում, ինչպես նաև Գիտական խորհրդում հաստատված բոլոր կարգերում, կանոնակարգերում և այլ իրավական փաստաթղթերում «ՊՈԱԿ» հապավումը և «Պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերը փոխարինել «Հիմնադրամ» բառով՝ անհրաժեշտ հոլովաձևերով:

2. Հատուկ կրթության ֆակուլտետի կանոնադրությունում «Հատուկ կրթության ֆակուլտետ» բառերը փոխարինել «Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ» բառերով՝ անհրաժեշտ հոլովաձևերով:

3. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«37.Ֆակուլտետի ամբիոններն են՝

1. Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,
2. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,
3. Քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն >>:

4. Բանասիրական ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«37. Ֆակուլտետի ամբիոններն են՝

1. Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

2. Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

3. Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն >>:

5. Օտար լեզուների ֆակուլտետի կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«37. Ֆակուլտետի ամբիոններն են՝

1. Արտասահմանյան գրականության ամբիոն,

2. Ռուսաց լեզվի ամբիոն,

3. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

4. Օտար լեզուների ուսուցման ամբիոն,

5. Ռոմանագերմանական լեզուների ամբիոն>>:

6. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`
<<37. Ֆակուլտետի ամբիոններն են`

1. Հոգեբանության ամբիոն,

2. Կիրառական հոգեբանության ամբիոն,

3. Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն>>:

7. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`
<<37. Ֆակուլտետի ամբիոններն են`

1. Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

2. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

3. Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

4. Տեխնոլոգիական կրթության ամբիոն>>:

8. Կուլտուրայի ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`
<<37. Ֆակուլտետի ամբիոններն են`

1. Ռեժիսուրայի ամբիոն,

2. Երաժշտության ամբիոն,

3. Հեռուստառադիոլրագրության ամբիոն,

4. Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոն,

5. Պարարվեստի մանկավարժության ամբիոն,

6. Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն>>:

9. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կանոնադրությունում ֆակուլտետի կառուցվածքը բաժնի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`
<<37. Ֆակուլտետի ամբիոններն են`

1. Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն,

2. Կերպարվեստի ամբիոն,

3. Երաժշտության մանկավարժության ամբիոն>>:

10. Հանձնարարել Համալսարանի Լրատվական վարչությանը և Անձնակազմի հաշտման բաժնին կատարել սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ